891·71U
Ч-27

-6 NOV 2011

Մ. ԴԱՐՈՇԻՆ




# ՊԱՎԼԻԿ ՄՈՐՈԶՈՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЙ
Академии Наук
СССР

891.71Մ
Դ-27

ՓՈԽ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ 1934 ԵՐԵՎԱՆ

34-11
891.71
7-27
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР




60652-67

29 MAR 2013

3126

Գերասիմովկա գյուղում, Ուրալում, կուլակներն սպանեցին պիոներ Պավլիկ Մորոզովին և նրա յեղբայր Ֆեդյային։
(Լրագրերից)

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

60652-67



1

Թունաթափ լճեր,
Անտառ անթափանց,
Գյուղը քաղաքից
Հեռու յե ընկած։
Մի կորած գյուղում,
Ուրալի խորքում,
Այստեղ, Պավլուշա,
Քո կյանքն եր ծաղկում։
Այստեղ լուսինը,
Վոր մեծ յերևա,
Ցոլնում ե կարծես
Ցեղենու վրա,
Բայց արևը վառ,

Անտառի միջից,
Ձեռքով է անում
Ու ասում.— «իջի՛ր»։
Այստեղ արջ ու գայլ,
Խորամանկ աղվես,
Տներն են մտնում
Շան ու կատվի պես,
Տներն են մտնում
Վորպես բարեկամ,
Ու մին էլ տեսար
Գնացին, չկան։
Բայց այդ գիշատիչ
Արջ, գայլ, աղվեսից
Գյուղում բավական
Վատթարները կան։
Հագնում են նրանք
Շան մորթուց մուշտակ
Յեվ արջի ձայնով
Ասում են հանդարտ.



«Մենք հավատարիմ
Շներ ենք, գիտեք.
Մեզանից վնաս
Չի գա ձեզ յերբեք»...
Բայց վոր լավ նայես,
Հայացքը վորպես
Խորամանկ աղվես,
Սպառնում է քեզ։

## 2

Կանչում են նրան
«Պաշկա կոմունիստ».
Ի՞նչ անենք՝ փոքրիկ,
Լեզվանի յե խիստ։
Նոր է լրացրել
Տասներեք գարուն,

Կարմիր վզկապն է
Վզին փայլփլում։
Քեռու գլխարկն է
Քաշել աչքերին,
Բայց մի նայեցեք
Նրա գործերին.
Փայտ է կտրտում
Մայրիկի համար,
Նոր ու նոր բաներ
Գիտի անհամար,
Դպրոց է գնում,
Աշխատում աշխույժ,
Խաղում, հավաքում
Նոր յեռանդ և ուժ,
Վո՛չ մի ժամանակ
Չի լինում տխուր,
Գիրքն ու տետրակը
Պահում է մաքուր,
Սրած է պահում



Ծայրը մատիտի...
Ամեն պիոներ
Նրա պես պիտի։
Յերբ արևմուտքում
Վառվում է ալ բոց,
Պավլուշան իսկույն
Վազում է դպրոց։
Այստեղ յեղբայրը—
Ցեղկան պատլիկ—
Մոտենում նրան
Ասում է.
— Պավլի՛կ,
Ինչո՞ւ շրջկոմը
Կովար չուղարկեց։
Գիտե՞ս, Պավլո՛ւշա,
Մոռացել են մեզ։
Լսել է վաղուց
Կանչը շեփորի,
Տխուր է, մռայլ

Դեմքը բոլորի,
Չկան ել զվարթ
Խաղ, զրույց, յերգեր...
Մեր կոլեկտիվը
Այս որն է ընկել։
Ասա՛, ի՞նչ անենք.
Շվարել ենք մենք։
Պավլուշան իսկույն
Ձայնով մարտական,
Տալիս է նրան
Կտրուկ պատասխան.
— Դե վո՛ր ասում ես
Մարդ չկա հարմար,
Թողեք յես լինեմ
Ձեզ համար կոլվար։
Կանգնեցեք շարքի,
Գնանք մարզանքի։
Մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք...
Ձեզ կարգի բերեք։



## 3

Ցանկապատերին,
Գյուղի պատերին
Գրել են, կախել
Մեծ պլակատներ։
Անցնող դարձողը
Դրանց մոտ կանգնած,
Աչքը չորս արած,
Կարդում է կամաց
«Կուլուկանովը,
Կուլակը հայտնի,
Լավ իմացեք, վոր
Գող է ցորենի».
Հազար-հազար
Կրծքի վրա
Ալ փողկապներ
Են ծաղկում,
Հազար-հազար

Պիոներներ
Նույն յերգերն
Են յերգում...
Յեվ Պաշկան հավետ,
Իր գործերի հետ,
Նրանց հետ մեկտեղ,
Այստեղ է, այնտեղ...

4

Այս ու այն կողմից
Ծահիճ է, ճահիճ,
Պիոների ճամպան
Փակում է մի բան։
Քամի՞ն է արդյոք,
Անտա՞ռն անթափանց,
Թե՞ լռությունը





Խոր, համատարած,
Թե՞ ներքև իջած
Մոխրագույն մի ամպ...
Չե՛... Պավլուշային
Պատահեց մի պապ՝
Կուլուկանովը —
Են հարուստ գողը։
Դուրս յեկան շտապ
Դարձյալ յերեք պապ։
Դուրս յեկան նրանք
Խոզի պես հաստ, մեծ
Ու Պավլուշային
Առան իրանց մեջ...
— Պավլի՛կ, Պավլի՛կ,
Վորդի, տե՛ս,
Դու այս անգամ
Լսիր մեզ.
Թող կոլեկտիվ,
Ժողովներ,





Ել մի՜ լինի
Պիոներ,
Իսկ յեթե մեզ
Չլսես,
Քեզ կմորթենք
Հավի պես...

5

— Բարև՛ քեզ, բարև՛,
Սերե՛գա պապի,
Յեկ խոստովանի
Ու մեզ մի՜ խաբի.
Կուլուկանովի
Մի սայլ ցորենը
Թագցրել ես դու
Այստեղ, քո տանը։
Դա մեր կոլխոզի



60652-67

Ցորենն է, գիտե՞ս.
Պետք է շուտ տանես,
Պահեստը հանձնես։
Ի՞նչ է, դու խուլ ես,
Սերե՛գա պապի.
Ցորենը հանի։
Դե շո՛ւտ, շտապի...
. . . . . . . . . . . . . . . . . . . .
— Յեթե դու մեզ
Չլսես,
Քեզ կմորթենք
Հավի պես...

6

Բեզարած գյուղը
Վաղուց էր քնած,
Յերբ մեր Պավլուշան

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ГСС Е. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясника

Գյուղխորհուրդ գնաց։
Կանգնած է դրսում,
Պատուհանի մոտ,
Իսկ այնտեղ, ներսում,
Մեծ սեղանի մոտ,
Նախագահը և
Միքանի կուլակ
Կամացուկ ձայնով
Խոսում են շտապ։
«Ուրեմն կրկին
Ալան ու Թալան,
Կրկին կոլխոզի
Բերքը գողանանք»...
Իսկ շուրջը լռեր,
Անտառ անթափանց,
Գյուղը քաղաքից
Հեռու չէ ընկած։
«Յես կերթամ շրջկոմ,
Կասեմ ամեն բան,



Թող տանեն, դատեն
Ու պատժեն նրան։
Թող պատասխանի
Նա դատարանին՝
Ինչու չէ այդպես
Օգնում կուլակին,
Վոր լուռ ու թագուն,
Տեղերում հարմար,
Մեծ փոսեր փորեն
Ցորենի համար»։

## 7

Կուլուկանովը,
Հարուստ, անվանի,
Իր մառաններում
Ողի շատ ունի։
Նրա սենյակում

Բազմել են այսոր
Գյուղի գիշատիչ
Գելերը բոլոր։
Բազմել են նրանք
Շուրջը սեղանի
Յեվ խմում առատ
Ողի ու գինի։
—Հարևան Դանել,
Մաքուր չես խմել։
Դե՛, դուք էլ, դուք էլ․
Ինչո՞ւ յեք լռել։
Խմում ե, խմում
Դանելը անվերջ
Յեվ խռպոտ ձայնով
Յերգում մեջ ընդ մեջ․
Ինչո՞ւ նա պիտի
Ուրախ չլինի․
Արժե՞ մտածել։
Փո՛ղ ե ստացել։



Փող ե ստացել
Յերեսուն մանեթ,
Մի սուր դանակ էլ
Ընծա նրա հետ,
—Բաժակներդ լի,
Յեղբայրք սիրելի։
Հիշենք ցորենը,
Արածն են ողի,
Յեվ են խայտառակ
Թղթերը գյուղի,
Թե ի՛նչպես յեղանք
Մենք ծաղր ու ծանակ
Ու վոտքի կանգնած
Ասենք․ «տեր՛ աստված,
Դու Դանել ողի
Գործը հաջողի…

Հենց կուլակները
Քեֆի միջոցին
Պավլիկն ու Ֆեդյան
Անտառ գնացին։
— Յելակի համար
Մի՛ գնա անտառ.
Յետ նայիր ու տես —
Հետևում են քեզ։
Ճանապարհն ընկավ
Դանելը հարբած,
Ընծա դանակը
Գրպանում պահած։
— Ինչո՞ւ յես լալիս,
Ֆեդկա, սիրելիս...
— Ել մի՛ ուշացնի,
Դանել հարևան, —
Ասում ե - կամաց





Ընկերը նրան։
— Գայլուշա՛, բալես,
Քո պապին եմ յես։
Արի բան տամ։ Ա՛յ։
— Վա՜յ…
Ցե՛ղկա, շտապի՛ր,
Փախի՛ր, ազատվի՛ր.
Ոձեր են սրանք
Նենգ ու խորամանկ…
— Չե՛, դու չես գնա։
Առ քեզ ել… ահա՛…

**9**

Մամուռ յեղեվնու
Ծառերի տակին
Գայլիկն ե ընկած,
Ցեղկան ել կողքին,





Յեվ խորհրդավոր
Նրանց հանգստից
Մամռոտ ծառերին
Պատել է թախիծ...
Ու ծեր անտառում
Խորին լռություն...

**10**

Մամռոտ յեղեվնու
Ծառերի տակին
Պավլիկն է ընկած
Ֆեդկան էլ կողքին:
Չի գնա յերբեք
Կոլվարը հերոս,
Խաղի, մարզանքի,
Հավաքույթ, դպրոց...
Բայց անտառը



Վառ արևի
Փայլը ծածկել
Չի կարող,
Յեվ Պավլուշան
Իրա գործով
Կենդանի յե
Ու հաղթող:
Պավլիկի տեղ
Ուրիշ պիոներ
Կգնա ու
Կնստի,
Կիսաա դասը
Նրա գրչով
Կգրի ու
Կավարտի:
Հազար-հազար
Կոլեկտիվում
Նրա գործը
Կյերգեն,

Հազար-հազար
Կրծքի վրա
Ալ փողկապներ
Կծաղկեն։
Իսկ դու, Պավլիկ,
Քո գործի հետ
Միատեղ,
Միշտ էլ կապրես
Այստեղ,
Այնտեղ,
Ամեն տեղ...



Պատ. խմբ. Ա. Հայրյան
Փոխադրեց Հ. Հայրապետյան
Տեխ. խմբ. Ս. Գասպարյան
Սրբագրեց Գար. Հակոբյան

Գլավլիտ № 8401 (բ), հրատ. № 2825, պատվեր № 140, տիրաժ 3000, հանձնված է արտադրության 21 I 1934 թ. Ստորագրված է տպագրելու 8|III 1934 թ. Պետհրատի տպարան, Յերևան

գինը 80 կոպ.

279

М. ДОРОШИН

# ПАВЛИК МОРОЗОВ

ГИЗ. ССР АРМЕНИИ ЭРИВАНЬ

Շապիկը՝ Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0391133

3126